ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ № 6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 2025 թվականի № ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ № 6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ ու 7-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորագվող կամ վերանորոգվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» № 2093-Ն որոշման № 1 հավելվածով սահմանված «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորագվող կամ վերանորոգվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկի 195-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սույն որոշման №№ 1 և 2 հավելվածներում նշված տարածքի նկատմամբ ճանաչել հանրության գերակա շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում կրթահամալիրի կառուցման ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատիրոջ շահից, քանի որ՝

ա. ծրագրի իրականացումը բխում է հանրակրթության ոլորտում բարեփոխումների ՀՀ կառավարության ռազմավարության պահանջներից,

բ. նախատեսվող կրթահամալիրի կառուցման արդյունքում կապահովվի

կրթության զարգացումը տվյալ բնակավայրում, էականորեն կբարելավվեն պայմանները, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը,

2) ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց սույն որոշման №№ 1 և 2 հավելվածներում ընդգրկված սեփականության օբյեկտի օտարման, քանի որ այն գտնվում է կրթահամալիրի նախագծով նախատեսված կառուցապատման գոտում և անհնար է ապահովել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ առանց դրա օտարման:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի ձեռք բերող է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի.

2) նախատեսված օտարման գործառույթների իրականացումը համակարգող և պատասխանատու մարմինը հանդիսանում է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեն.

3) սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնական ժամկետը

___ թվականի _____ _____-ն է.

4) սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքի նկարագրության արձանագրության կազմման գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեն.

5) սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքի նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի № 108-Ն որոշմամբ սահմանված կարգի և նկարագրության արձանագրության օրինակելի ձևի համաձայն:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուն հաջորդող 7-օրյա ժամկետում որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատիրոջը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 1

ՀՀ կառավարության

2025 թվականի_____

_____-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

Կադաստրային ծածկագիր	Հասցե	Նկարագրության արձանագրության կազմման ժամկետը
08-026-0009-0007	ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրի 2-րդ փողոցի № 6 հողամաս	2 ամիս